AMERIABANK

25.06.2020թ.
O.AB.100.12CIB.PIED.0.6908.20

Բենեֆիցիար՝
Փարաքար համայնքի «Բարեկարգում» տնօրինություն

ԵՐԱՇԽԻՔ No. O.AB.100.12CIB.PIED.0.6908.20
(ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է Փարաքար համայնքի «Բարեկարգում» տնօրինության (այսուհետ՝ Բենեֆիցիար) կողմից կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում «ԲԻԴԵՔ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Պրինցիպալ) կողմից կնքվելիք թիվ ՓՀԲՏ-ԳՀԱՇՁԲ-20/18 պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ) ապահովում:

2. Երաշխիքով «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին վճարել մինչև 56,124,922.00 (հիսունվեց միլիոն մեկ հարյուր քսանչորս հազար ինը հարյուր քսաներկու) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար)՝ Պահանջն ստանալուց հետո տասը աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի՝ Պահանջում նշված հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի՝ Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է թողարկման օրվանից մինչև Բենեֆիցիարի կողմից Պայմանագրի կատարման արդյունքը ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ, բայց ամեն դեպքում ոչ ուշ, քան 15 հունվարի 2021թ. ներառյալ:

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Ընդ որում, Պահանջում պետք է նշվի, թե Պրինցիպալը որ պարտավորությունն է խախտել: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ՓՀԲՏ-ԳՀԱՇՁԲ-20/18 պայմանագրի՝ ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները,

2) Բենեֆիցիարի կողմից Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակված ծանուցումը.

3) սույն Երաշխիքը:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի Պահանջը, եթե՝

1) Պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն Երաշխիքի պայմաններին.

2) Պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը Պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:

10. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կորպորատիվ և ներդրումային բանկինգի գծով տնօրեն՝ **Գագիկ Ծահակյան**

ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, 0010
Վ. Սարգսյան փող. 2
Հ՝ (374 10) 56 11 11
Ֆ՝ (374 10) 51 31 33

AND BEYOND

258995